



ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ
NATIONAL SUPREME COUNCIL OF THE ARMENIANS OF WESTERN ARMENIA
НАЦИОНАЛЬНЫЙ ВЕРХОВНЫЙ СОВЕТ АРМЯН ЗАПАДНОЙ АРМЕНИИ
المجلس الوطني الأعلى لأرمن أرمينيا الغربية

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
հիմնադրումի մասին

Նկատի առնելով Արցախեան երկրորդ պատերազմի հանգամանքները, անցուդարձերը եւ հետեւանքները,

Նկատի առնելով տարածաշրջանին մէջ ստեղծուած աշխարհառազմավարական նոր իրավիճակը,

Խորապէս մտահոգուելով տարածաշրջանային եւ միջազգային զօրքերու տեղաշարժներէն ու անոնց արտայայտած սպառնալիքներէն մեր ազգի գոյատեւման նկատմամբ,

Գիտակցելով որ սպասուած եւ անխուսափելի միջազգային լայնածաւալ զինեալ առճակատումը կրնայ որեւէ պահին սանձազերծուիլ իր առաջին մարտադաշտը դարձնելով Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի տարածքները,

Ափսոսալով հայկական քաղաքական եւ մանաւանդ պետականութեան ներկայ անկայուն ու անպատրաստ ծայրայեղ վիճակը,

Իմանալով որ աշխարհասփիւռ տարագիր հայութեան աւանդական քաղաքական, ընկերային եւ հոգեւոր բոլոր անգործուն կառոյցները կը գտնուին պառակտման ու միասնական գործելաճի անունակութեան ու բացարձակ բացասական դաշտի վրայ,

Կ'որոշէ հետեւեալը.

1. Անյապաղ եւ պաշտօնապէս յայտարարել ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ-ի հիմնադրումը առանց սպասելու ԱՄՆ-ի իրաւարար վճիռի հարիրամեակին, ինչպէս ծրագրուած էր:

2. Այս պահէն սկսեալ հիմնադրուած ազգային քաղաքական միասնական կառոյցի պաշտօնական անուանումն է՝ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ. Ան կ'ընդգրկէ 144 անդամ ու կը բաղկանայ երկու ենթակառոյցներէ՝ Աւագանիներու եւ Պատգամաւորներու: Ան իր շարքերուն մէջ ունի գրաւեալ Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ տարածքներուն վրայ ապրող հայութեան 12 ներկայացուցիչներ: Անձնակազմի մասին մանրամասնութիւնները կը հրապարակուին հարմար պահին:

3. Սոյն յայտարարութիւնը ուժի մէջ կը մտնէ իր հրապարակման թուականէն սկսեալ:

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ-Ի
հիմնադիր եւ նախաձեռնող մարմին
17 Նոյեմբեր 2020